ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հոկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

140
(3171)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՖՖ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ Է ՄԱՏՆՎԵԼ

Հայկական ֆուտբոլում հերթական աղաղակող դեպքն է արձանագրվել՝ վերածվելով խայտառակ նախադեպի, որը վտանգի տակ է դնում ոչ միայն ֆուտբոլի հեղինակությունը, այլեւ մանկապատանեկան սպորտի հիմքերը:

«Անի 2014» եւ «Աբովյան 2014» թիմերի միջեւ կայացած հանդիպման ընթացքում, ինչպես ArmLur.am-ը հայտնել էր, «Անի» ակումբի մարզիչն ու անվտանգության աշխատակիցները ծեծել են մրցավար Արմեն Խաչատրյանին: Այս խայտառակ միջադեպը ոչ թե ցնցեց, այլ կարծես անտարբեր թողեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությանը, որը, դատելով հետագա իրադարձություններից, որոշել է ոչ թե պաշտպանել բռնության ենթարկված մրցավարին, այլ, որոշում է կայացվել, որ 2025-2026 մրցաշրջանի մանկապատանեկան մի շարք տարիքային առաջնություններ այլեւս մրցավարներով չեն սպասարկվի: Այլ կերպ ասած՝ ՀՖՖ-ն հրաժարվում է իր հիմնական գործառույթներից՝ պատասխանատվությունը թողնելով հենց ակումբների վրա: Այո, այո՝ այն ակումբների, որոնց ներկայացուցիչներն արդեն հասցրել են ծեծի ենթարկել մրցավարին:

Սա ոչ թե որոշում է, այլ մեղքի ճանաչում եւ անգործության փաստաթուղթ:

Փոխանակ պաշտպանելու սեփական աշխատակցին, ապահովելու կարգապահություն եւ պատասխանատվություն՝ ՀՖՖ-ն հայտարարում է, որ այսուհետեւ խաղերը կսպասարկեն հենց դաշտի տեր ակումբների մարզիչներն ու ֆուտբոլիստները:

«Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ միջադեպը քննվում է ՀՖՖ կարգապահական կոմիտեի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է ՀՖՖ-ի անարդյունավետ կառավարմանը՝ սկսած ֆինանսական անթափանց որոշումներից մինչեւ կադրային քաոսը: Այս միջադեպը հերթական վկայությունն է, որ ֆեդերացիայի ներկայիս ղեկավարությունը կորցրել է կառավարման եւ պատասխանատվության զգացումը:

2025 թվականի ապրիլի 1-ից Հայկ Նազարյանը, վարչապետի որոշմամբ, 3 տարի ժամկետով դարձավ Հայաստանի Հանրապետության առեւտրական կցորդ Իրանի Իսլամական Հանրապետությունում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նազարյանին Իրանում պահելու համար ՀՀ Կառավարությունը կլորիկ գումարներ է հատկացնում: Ըստ կառավարության՝ներկայում Իրանի հետ քննարկվում է համատեղ ընկերություններ կամ իրանական ընկերությունների մասնաճյուղեր հիմնելու տարբերակներ, ինչպես նաեւ Հայաստանից դեպի Իրան սերտիֆիկատով արտահանումը դյուրացնելու գործընթացը. ուստի անհրաժեշտ է այս խնդիրները լուծելու համար Իրանում ունենալ առեւտրային կցորդ: Կառավարությունը կանխատեսում է, որ կցորդի հաստիքի ստեղծումը դրական կազդի հայաստանյան տնտեսության վրա, իրանցի ներդրողները հետաքրքրություն կցուցաբերեն «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ կառուցվող ինժեներական քաղաքի նկատմամբ: Ձեւակերպումները հիշեցնում են ձախողված ԱՆԻՖ հիմնադրամի տխուր եւ կոռուպցիայով հարուստ պատմությունը: Այս ամենն ապահովող անձի՝ Հայկ Նազարյանի բնակության, սննդի, ուսման, ծառայողական մեքենայի համար գործադիրը հատկացնում է 28 մլն 903 հազար դրամ՝ գրեթե 76 հազար ԱՄՆ դոլար: Հետաքրքիրն այն է, որ Նազարյանը, ըստ որոշման, ապրիլի 1-ից է նշանակվել, սակայն առեւտրային կցորդի պահպանության համար պետբյուջեց գումար հատկացվել է 2025 թվականի մարտի 1-ից դեկտեմբերի 31-ի համար:

Բարերար Սամվել Կարապետյանի պաշտպանական թիմի անդամ, ամերիկաբնակ հրեա, հայտնի փաստաբան Ռոբերտ Ամստերդամի խոսքերը երեկ ժամեր շարունակ իշխող ՔՊ-ականները պտտեցնում էին՝ իրավապահներին փաստացի հրահանգելով կալանավորել փաստաբանին, ով ելույթ է ունեցել ՀՀ-ի դեմ: Իսկ ի՞նչ էր ասում ամերիկացի փաստաբանը. «Հայաստանի նկատմամբ հարձակում ենք գործելու ամեն օր, մինչեւ Սամվել Կարապետյանին ազատ չարձակեն»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանական շրջանակները խնդիր են դրել իրենց նոր «թիրախին» կալանքի տանել: Թեեւ փաստաբանը հետագայում պարզաբանել է, որ խոսքը վերաբերում է միջազգային իրավական ու քաղաքական ճնշման գործիքներին, ոչ թե ֆիզիկական գործողություններին, սակայն ՔՊ-ի պատգամավորներն ու նրանց հարող ՀԿ-ները մեկնաբանել են արտահայտությունը որպես «հակապետական սպառնալիք»: Նկատենք որ ձեռագիրը նույնն է. ինչպես բարերարի դեպքում Նիկոլ Փաշինյանը գրեց, թե Սամվել Կարապետյանը ասել է՝ «կմիջամտեմ», եւ այդ բառի վրա կառուցվեց մեղադրանքը, նույնը փաստաբանի դեպքում է: Փաստաբանն ասում է՝ «կհարձակվենք Հայաստանի վրա....» եւ շարունակում բացատրել՝ինչպես: Իսկ ՔՊ-ն սկսեց տարածել, թե փաստաբանն ասել է՝«Հայաստանի դեմ գրոհելու ենք». ուրեմն պետք է պատժվի: Այդ հիմքով, ըստ ՔՊ-ական աղբյուրների, իշխանական շրջանակներում արդեն քննարկվում է Ռոբերտ Ամստերդամի գործունեությունը սահմանափակելու հարցը:

Հայաստանում վերջին շրջանում ֆորումներից, համաժողովներից եւ գագաթաժողովներից «աչք չի բացում» կառավարությունը: Առաջիկայում՝ 2025 թվականի նոյեմբերի 21-ից 23-ը, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի առաջին զբոսաշրջության միջազգային ցուցահանդես-համաժողովը՝ International Tourism Fair Armenia 2025-ը: Պաշտոնական հայտարարությամբ, ֆորումը դառնալու է զբոսաշրջության միջազգային խաչմերուկ, որտեղ ձեւավորվում են նոր հնարավորություններ եւ բազում համագործակցություններ: Այս ֆորումի համար էկոնոմիկայի նախարարությունը հատկացրել է 75 մլն 400 հազար դրամ: Միջոցառման կազմակերպման ամենաթանկարժեք ծառայությունը հյուրասիրության եւ սննդի կազմակերպման համար է հատկացվել՝ 30 մլն դրամ, որը ամբողջ հատկացման գրեթե 40%-ն է: 2-րդ ամենաթանկ հատկացումը բարձրաստիճան հյուրերի եւ մասնակիցների տեղափոխման ծառայությունները՝ 6,5 մլն դրամ: Ահա, թե ինչպիսի ծառայությունների համար է ծախսվում պետական բյուջեն:

International Tourism Fair Armenia

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄԱՑ՝ ԼՍՐՎԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԼԻՔ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿԱԼԱՆՔԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հակակոռուպցիոն դատարանում երեկ ֆնվել է գործարար Սամվել Կարապետյանի խափանման միջոցի՝ կալանքի երկարաձգման միջնորդությունը:

ArmLur.am-ը դատարանի դիմաց իրականացրել է ուղիղ միացում՝ լուսաբանելով տեղի ունեցողը:

Պարզվել է, որ գործը մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վահե Դոլմազյանին, որը հասարակության շրջանում հայտնի է որպես իշխանությունների շահերին համահունչ որոշումներ կայացնող դատավոր:

Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանը կալանավորվել է հունիսի 18-ին՝ իշխանությունը զավթելու եւ սահմանադրական կարգը տապալելու հրապարակային կոչերի մեղադրանքով: Ազգային բարերարը չի ընդունում առաջադրված մեղադրանքները:

Լրագրողների հարցերին պատասխանել է գործարարի եղբորորդին՝ Նարեկ Կարապետյանը:

-Պարոն Կարապետյան, ի՞նչ սպասելիքներ ունեք այսօրվա դատավարությունից, հաշվի առնելով, որ գործը մակագրվել է Վահե Դոլմազյանին:

-Իշխանությունը ամեն ինչ անելու է, որպեսզի Սամվել Կարապետյանի կալանքը եւս երկու ամսով երկարացվի: Նրանք պնդում են, թե որեւէ մտահոգություն չունեն ոչ Սամվել Կարապետյանից, ոչ նրա շարժումից, բայց եթե այդպես է, ապա ինչո՞ւ են այդքան ակտիվ ձգտում երկարաձգել կալանքը, ինչո՞ւ են առհասարակ նրան կալանավորել:

Նրանց նպատակը հստակ է՝ մեկ օրվա ընթացքում հաջորդ դատն ուղղակի նշանակեցին, որպեսզի ժամանակ չլինի դժգոհության ակցիա կազմակերպելու: Սակայն, ինչպես տեսնում եք, դատարանի դիմաց ամբողջ փողոցը մարդկանցով լի է. անկախ ամեն ինչից՝ մարդիկ գալիս են իրենց աջակցությունը հայտնելու:

-Իշխանությունը պնդում է, թե հանրահավաքներով դուք սպառնալիք եք ստեղծում: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Իսկ երբ իրենք էին հանրահավաքներ անում, դա սպառնալիք չէ՞ր: Հանրահավաքը ժողովրդավարական արտահայտման միջոց է, ոչ թե սպառնալիք:

-Իշխանությունը նաեւ պնդում է, թե ձեր կողմնակիցների մեծ մասը փողի համար է մասնակցում ակցիաներին:

-Այստեղ հավաքված հազարավոր մարդկանցից ես ճանաչում եմ առավելագույնը տասից տասնհինգ տոկոսին: Բոլորը եկել են բացառապես ինքնակամ: Վերջին շրջանում մենք որեւէ գաղափարական փաստարկ չենք լսել իշխանություններից. միայն անվանարկումներ ու անձնական հարձակումներ են: Իսկ մեր ժողովրդին դա այլեւս հետաքրքիր չէ: Ժողովրդավարությունը չի կառուցվում մարդկանց վարկաբեկելով:

-Միջազգային փորձագետներից մեկն այսօր հայտարարեց՝ «Այնքան ենք հարձակվելու Հայաստանի վրա, մինչեւ Սամվել Կարապետյանը ազատ արձակվի»: Ի՞նչ կասեք այս հայտարարության մասին:

-Ոչ ոք չի կարող գրոհել Հայաստանի վրա: Իսկ իշխանությունները պարզապես նոր տակտիկա են փնտրում, որովհետեւ այս քաղաքականությունը բերելու է նրան, որ շուտով բանտերում տեղ չի մնա:

-Լուրեր են, թե հնարավոր է հաջորդը դուք լինեք: Պատրա՞ստ եք կալանավորման:

-Այո՛, ես պատրաստ եմ: Այդ հարցը ինձ մի քանի անգամ են տվել, եւ միշտ ասել եմ՝ խնդիր չկա:

-Իսկ ի՞նչ է լինելու հանրահավաքից հետո:

-Նախատեսվում է մեծ քայլերթ, որպեսզի ցույց տանք՝ այս մեթոդներով հնարավոր չէ ճնշել մարդկանց կամքը: Ալիքը չի կանգնելու: Մարդիկ այլեւս չեն լռելու ապօրինությունների առաջ:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ԴՈՒԲԱՅ

Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը հոկտեմբերի 26-ից 30-ը ներառյալ կգործուղվի Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ որոշման մեջ նշվում է, որ գործուղման համար հիմք է հանդիսացել Expo City Դուբայի գործադիր տնօրեն Ռիմ Ալ Հաշիմից նախորդ տարի՝ հոկտեմբերի 25-ին ստացած հրավերը՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան քաղաքների համաժողովին (2025APCS), ինչպես նաեւ քաղաքապետերի համաժողովին մասնակցելու նպատակով:

Պատվիրակության կազմում են Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, նրա խորհրդական Սոնա Թեւանյանը, աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գեւորգյանը, աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող Մալվինա Պողոսյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ֆրանսիական ALAN թվային առողջապահության համակարգի հիմնադիր Ժան-Շառլ Սամուելյանին եւ Flagship Pionerring ընկերության համահիմնադիր Նուբար Աֆեյանին:

Վարչապետը ողջունել է նրանց այցը Հայաստան եւ նշել, որ Կառավարությունն աստիճանաբար մոտենում է առողջապահության ապահովագրության համակարգի ներդրմանը: Կարեւորելով առողջապահության ոլորտում համապարփակ բարեփոխումները՝ Նիկոլ Փաշինյանը համոզմունք է հայտնել, որ ապահովագրության համակարգի ներդրումը կունենա առանցքային նշանակություն ինչպես ոլորտի, այնպես էլ հանրության համար:

Ժան-Շառլ Սամուելյանը ներկայացրել է ALAN թվային առողջապահության համակարգի գործունեությունը, հնարավորություններն ու առավելությունները, որոնք միտված են ոլորտի թվայնացմանը, մատուցվող ծառայությունների դյուրացմանն ու բարելավմանը:

Վարչապետ Փաշինյանը կարեւորել է առողջապահական ոլորտի լիարժեք թվայնացումն ու ծառայությունների արդյունավետության բարձրացումը:

Այս համատեքստում զրուցակիցները քննարկել են հետագա համագործակցության հնարավորություններին վերաբերող հարցեր: Վարչապետն առաջարկել է շարունակել երկխոսությունը ՀՀ առողջապահության նախարարության հետ՝ փոխգործակցության ուղիները հստակեցնելու նպատակով:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԸ ԶՐՈՒՅՑԵԼ Է

Նախարար Արարատ Միրզոյանը ՀՀ վարչապետի պատվիրակության կազմում Շարմ էլ Շեյխում մասնակցում է Մերձավոր Արեւելքի «Խաղաղության գագաթնաժողովին»: Այս մասին հայտնում են ԱԳՆ-ից:

Միջոցառման շրջանակներում նախարարը շփումներ է ունեցել մի շարք երկրների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի, Ադրբեջանի, Իսպանիայի, Օմանի, Ֆրանսիայի, Հորդանանի, Եգիպտոսի, Թուրքիայի, Նորվեգիայի, Հնդկաստանի ԱԳ նախարարների եւ այլ պաշտոնյաների հետ:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՔ Է

Դեռեւս հունիսի 14-ին հայտնի դարձավ, որ կալանավորվել է Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը

ArmLur.am-ը քիչ առաջ իր աղբյուրներից տեղեկացավ, որ Ռազմիկ Մկրտչյանին դատարանն ազատ է արձակել՝ ստորագրությամբ երկրից չբացակայելու պահանջով:

Հիշեցնենք, որ հունիսի 10-ին նա հայտարարել էր իր լիազորությունները դադարեցնելու մասին:

Ըստ մամուլում տարածված տեղեկությունների Ռազմիկ Մկրտչյանը կալանավորվել էր Շենգավիթի տարածքային կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Մակարյանին ծեծի ենթարկելու եւ նրա ազատությունը սահմանափակելու համար: Մակարյանը քննադատել էր Մկրտչյանի աշխատանքային գործունեությունը, առաջարկել է ՔՊ նիստին քննարկման առարկա դարձնել նրա աշխատանքը, ինչը դուր չէր եկել Մկրտչյանին: Ինչից հետո տեղի էր ունեցել ծեծկռտուք:

ՆԻԿՈԼԱ ՍԱՐԿՈԶԻՆ ԿԲԱՆՏԱՐԿՎԻ՞

Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին հոկտեմբերի 21-ին կբանտարկվի, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ֆրանսիայի նախկին նախագահը «Լիբիական գործով» իր հինգ տարվա ազատազրկումը կկրի Փարիզի 14-րդ թաղամասի Սանտե բանտում, հաղորդում է BBC-ն:

Սեպտեմբերի վերջին Փարիզի դատարանը 70-ամյա Սարկոզիին մեղավոր ճանաչեց Լիբիայի հանգուցյալ բռնապետ Մուամմար Քադաֆիից միլիոնավոր եվրոներ ընդունելու մեջ՝ իր նախընտրական քարոզարշավը ֆինանսավորելու համար, եւ նրան դատապարտեց հինգ տարվա ազատազրկման:

Նախկին նախագահը հերքել է բոլոր մեղադրանքները՝ հայտարարելով, որ ինքն անմեղ է եւ իր դեմ հարուցված քրեական հետապնդումը բացատրել է քաղաքական դրդապատճառներով: Նրա փաստաբանները ծրագրում էին վճռաբեկ գանգատ ներկայացնել:

«Եթե նրանք ուզում են, որ ես բանտում քնեմ, բանտում կքնեմ, բայց կանեմ դա գլուխս բարձր»,- դատավճռի հրապարակումից հետո լրագրողներին ասել է Սարկոզին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Միացյալ Նահանգներն այժմ աշխարհի ամենահարուստ երկիրն է, մասամբ՝ մաքսատուրքերի ներդրման շնորհիվ:

«Ես կարծում եմ, որ այժմ՝ մաքսատուրքերի շնորհիվ, մենք աշխարհի ամենահարուստ երկիրն ենք, մենք ստանում ենք հարյուր միլիարդավոր դոլարներ», - ասել է նա լրագրողներին Ճարմ էլ Շեյխից Վաշինգտոն թռչող իր ինքնաթիռում:

Ապրիլի 2-ին Թրամփը հայտարարեց 185 երկրներից եւ տարածքներից ներմուծվող ապրանքների վրա մաքսատուրքերի սահմանման մասին:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է Չինաստանից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի զգալի բարձրացման եւ մի շարք այլ առեւտրային միջոցառումների մասին՝ի պատասխան Պեկինի՝ հազվագյուտ մետաղների արտահանման սահմանափակման փորձերին: Իր Truth Social սոցիալական ցանցում արված հայտարարության մեջ Թրամփը նշել է, որ վաղուց էր կասկածում Չինաստանի ղեկավարությանը թշնամական քայլերի պատրաստման համար եւ, ինչպես երեւում է, ճիշտ էր:

Սպիտակ տան ղեկավարի վրդովմունքը առաջացրել են այն նամակները, որոնք, ըստ նրա, Չինաստանը ուղարկել է տարբեր երկրներին՝ նախազգուշացնելով հազվագյուտ մետաղների մատակարարման ամբողջական վերահսկման մասին: Թրամփի խոսքով՝ նամակներում խոսքը վերաբերում է ցանկացած արտադրանքի, որտեղ օգտագործվում են հազվագյուտ մետաղներ, նույնիսկ եթե այն արտադրված է Չինաստանի սահմաններից դուրս:

Թրամփի կարծիքով՝ Չինաստանը միտումնավոր ստեղծել է մենաշնորհ հազվագյուտ մետաղների վրա եւ այժմ պատրաստվում է այն օգտագործել: Միեւնույն ժամանակ, ըստ նրա, ԱՄՆ-ն շատ ավելի լայն հնարավորություններ ունի նման քաղաքականություն վարելու համար եւ այժմ սկսելու է կիրառել դրանք, թեեւ նախկինում խուսափել է նման քայլերից:

ԵՄ–ԻՆ ԿԱՐՈՂ Է ԱՆԴԱՄԱԿՑԵԼ 2028–ԻՑ

Չեռնոգորիան ԵՄ-ին անդամակցության ներկայիս թեկնածու երկրներից գտնվում է առաջին տեղում եւ կարող է Եվրամիություն մտնել արդեն 2028 թվականին:

Ինչպես տեղեկացնում է ՏԱՍ-ը ՝ այդ մասին մամուլի ասուլիսում հայտարարել է Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը Չեռնոգորիա կատարած այցի ընթացքում:

«Դուք լի եք վճռականությամբ՝ավարտելու բոլոր բանակցային գլուխները (խմբ.՝ ԵՄ անդամակցության բանակցությունների բաժինները) հաջորդ տարի.... Մեզ դուր են գալիս ձեր հավակնությունները», - ասել է ֆոն դեր Լայենը՝ նշելով, որ ԵՄ-ն աջակցում է երկրի հավակնությանը՝ անդամ դառնալ մինչեւ 2028 թվականը:

ԱՐՄԱՎԻՐԻ ՊԱՇՏՈՆԱՆԿ ԱՐՎԱԾ ՓՈԽՄԱՐԶՊԵՏԸ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Արմավիրի մարզպետարանի երկարամյա աշխատակիցը, ով հասել էր փոխմարզպետի պաշտոնի, գրչի մեկ հպումով ազատվել է պաշտոնից Նիկոլ Փաշինյանի հրամանով:

Խաչատուր Մկրտչյանը գրեթե 30 տարի համայնքապետարանում տարբեր պաշտոններ զբաղեցնելուն զուգահեռ համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ներում տեղավորել է կնոջը՝ Լուսածին Ալեքսանյանին եւ համատեղ բնակվող Անահիտ Մկրտչյանին:

Համաձայն 2024 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ Մկրտչյանի կինը «Արմավիրի համայնքապետարանի գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրենն է, համատեղ բնակվող Անահիտ Մկրտչյանը «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 10 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում որպես հոգեբան է աշխատում, իսկ որդին՝ Հովհաննես Մկրտչյանը, ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ է:

Խաչատուր Մկրտչյանը 1996 թվականից Արմավիրի համայնքապետարանում աշխատանքի է տեղավորվել որպես ՀՀ Արմավիրի մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի առաջատար, այնուհետեւ գլխավոր մասնագետ:

Դրանից հետո՝2000 թվականից, եղել է նաեւ Արմավիրի մարզպետարանում որպես Քաղաքաշինության վարչության պետ. նրա հաջորդ պաշտոնը կրկին մարզպետի տեղակալի պաշտոնն է եղել, ապա աշխատել է որպես խորհրդական եւ կրկին մարզպետի տեղակալ:

Փոխմարզպետը հայտարարագրել է 3 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում Արմավիրի մարզի Արմավիր համայնքում, եւ 2 հողամաս Շենավան համայնքում: Բնակարանը Մկրտչյանը 2021 թվականին նվիրատվություն է ստացել:

Տվյալ տարվա ընթացքում նախկին փոխմարզպետը գնել է 2018 թվականի արտադրության, JEEP մակնիշի տրանսպորտի միջոց, որն արժեցել է 4 մլն դրամ:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 275 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 3 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 10 մլն 234 հազար դրամ, որից 9 մլն 158 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Արմավիրի մարզի մարզպետի աշխատակազմից, 775 հազար 310 դրամը կենսաթոշակ է, իսկ 300 հազար 786 դրամն կրկին աշխատանքի վարձատրություն է Արմավիրի համայնքապետարանից:

Մկրտչյանը պաշտոնանկ է արվել այս տարվա հունվարի 7-ին՝ կրկին վարչապետի հրամանով. նրա պաշտոնը մինչ այս պահը թափուր է: Երկարամյա աշխատակցին փոխարինող չեն գտնում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԵՎԱՆԻ ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԿՄԵԿՆԻ ԹՈՒՐՔԻԱ

ArmLur.am-ը գրել էր, որ ԱԺ պատգամավորները կմեկնեն Թուրքիա: Ինչպես տեղեկանում ենք, խորհրդարանի թիմից բացի՝ մեկ այլ այցով Թուրքիա կմեկնի Երեւանի փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ, նախարարի պարտականությունները կատարող Արաքսիա Սվաջյանի գրությամբ, Թուրքիայի Հանրապետության Կապադովկիա քաղաքում կայանալիք «Մշակութային ուղիներ» ծրագրի խորհրդատվական 14-րդ ֆորումին մասնակցելու նպատակով Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանին 2025 թվականի հոկտեմբերի 22-ից 25-ը ներառյալ անհրաժեշտ է գործուղել Թուրքիայի Հանրապետության Կապադովկիա քաղաք:

Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանի բացակայության ընթացքում Երեւանի քաղաքապետի տեղակալի պարտականությունները կկատարի Երեւանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԸ ԳՈՐԾՈՒՂՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆ

Վարչապետ Փաշինյանը որոշում է ստորագրել.

Համաձայն «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանին 2025 թվականի հոկտեմբերի 14-17-ը գործուղել Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ)՝ ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի 32-րդ նիստին մասնակցելու նպատակով:

2. Էդուարդ Հակոբյանի՝ Ռուսաստանի Դաշնություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին հատկացված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

Ռ. ՄԿՐՏՉՅԱՆԸ ՔՊ–ԻՑ ԴՈՒՐՍ ԿԳԱ

Շենգավիթ վարչական շրջանի նախկին ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը հայտարարություն է տարածել.

«Ես՝ Ռազմիկ Մկրտչյանս, տեղեկացնում եմ, որ 2025 թվականի հոկտեմբերի 3-ին որոշում եմ կայացրել դուրս գալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից:

Վերջին ամիսներին առավել քան երբեւէ զգացել եմ Շենգավիթի բնակիչների անկեղծ աջակցությունն ու հավատը:

Դա ամենամեծ գնահատականն է, որը կարող է ստանալ յուրաքանչյուր պատասխանատու մարդ:

Հպարտություն է լինել համայնքի մի մաս, որտեղ վստահությունը ձեւավորվում է գործով, իսկ միասնությունը՝ փոխադարձ հարգանքով:

Հարգանքով՝

Ռազմիկ Մկրտչյան»,- գրել է նա:

ՈՐՈՇՈՒՄ

ԻՆՉ ՎՃՌՎԵՑ ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԵՎ ԿՆՈՋ ՔՐԳՈՐԾՈՎ

Հակակոռուպցիոն կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել գեներալ Մանվել Գրիգորյանի հարազատների դեմ հարուցված քրեական գործով ու վարույթն ուղարկել է հակակոռուպցիոն դատարան:

Ըստ նախաքննական մարմնի՝ Կարեն Մանվելի Գրիգորյանին՝ Մանվել Գրիգորյանի որդուն, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Էջմիածնի քաղաքապետի՝ 2005 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 79 հրամանով, նույն թվականի նոյեմբերի 1-ից զբաղեցնելով Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի քաղաքապետի տեղակալի պաշտոնը, հանդիսանալով պետական մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական լիազորություններ, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող, պետական մարմնի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ եւ այդ լիազորությունների ուժով հանդիսանալով պաշտոնատար անձ՝ նույն համայնքի ղեկավար Գագիկ Ավագյանի հետ համատեղ, խմբի կազմում, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը՝ Վաղարշապատ համայնքին պատկանող Բաղրամյան փողոցի թիվ 1 միջնակարգ դպրոցի 907.5 քմ ընդհանուր մակերեսով կիսակառույց մասնաշենքերը եւ պետական սեփականություն հանդիսացող 3363 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքը փաստացի Նազիկ Ամիրյանինը դարձնելու անձնական շահագրգռվածությունից ելնելով:

Ըստ նախաքննական մարմնի՝ Սեդրակ Սողբաթյանի օժանդակությամբ նրանք իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ, ինչպես նաեւ Սեդրակ Սողբաթյանի եւ Նազիկ Ամիրյանի հետ նախնական համաձայնությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ օրինականացրել են ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի գույք, որի նպատակն է եղել թաքցնել եւ խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը եւ իրական պատկանելիությունը:

Նազիկ Հովհաննեսի Ամիրյանին՝ Մանվել Գրիգորյանի կնոջը, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Էջմիածնի քաղաքապետ Գագիկ Ավագյանի, նույն քաղաքի փոխքաղաքապետ Կարեն Գրիգորյանի եւ Սեդրակ Սողբաթյանի հետ նախնական համաձայնությամբ օրինականացրել է ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի գույքը, որի նպատակն է եղել թաքցնել եւ խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը եւ իրական պատկանելիությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Հոկտեմբերի 13-ին, խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 20:10-ի սահմաններում ռուսական համարանիշներով «Merðedes» մակնիշի ավտոմեքենան Իսակովի պողոտայում՝ ժողովրդին հայտնի ԱՄՆ դեսպանատան խաչմերուկում, բախվել է ճանապարհի բաժանարար գոտում տեղադրված լուսակիրին (սվետոֆոր), կոտրել այն եւ հայտնվել ճանապարհի մեջտեղում:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով, ըստ նախնական տեղեկությունների, բարեբախտաբար տուժածներ չկան:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւանի քաղաքի գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի եւ գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են պարեկները:

Վթարի փաստով ՊԾ Երեւանի քաղաքի գնդում փաստաթղթեր են կազմվում, որտեղ էլ պարզվում է ավտոմեքենայի սեփականատիրոջ եւ վարորդի ինքնությունը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Վարսեր գյուղի բնակիչ 19-ամյա մի երիտասարդ ապօրինի ձեռք է բերում եւ իրացնում թմրանյութ:

Հոկտեմբերի 11-ի կեսօրին մոտ Վարսեր գյուղից միջպետական ավտոճանապարհ տանող հատվածում երիտասարդը ձերբակալվեց ու տեղափոխվեց Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց կպչուն ժապավենով 43 փաթեթ՝ լցված ընդհանուր 82 գրամ դեղնականաչավուն զանգվածով, նաեւ մոխրացած հետքերով երկու կաթոցիչ:

Ըստ երիտասարդի՝ մարիխուանայով փաթեթները նա վերցրել է Ծաղկունք գյուղի տարածքում՝ տեղադրելու միջոցով դրանք իրացնելու նպատակով:

Ոստիկանների տեղեկության համաձայն՝ 19-ամյա երիտասարդը մինչ ձերբակալվելը ձեռք բերած փաթեթների մի մասն արդեն տեղադրել էր:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ հայտնաբերվեցին արդեն տեղադրված ութ փաթեթները՝ ընդհանուր մոտ 18 գրամ դեղնականաչավուն զանգվածով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Տավուշի մարզի գումարտակի 2-րդ վաշտի 3-րդ դասակի պարեկները հոկտեմբերի 12-ին, չամրակապված վարելու համար, Դիլիջանի Կամոյի փողոցում կանգնեցրել են Էջմիածին քաղաքի բնակիչ 19-ամյա երիտասարդի վարած «Կիա» մակնիշի ավտոմեքենան: Երիտասարդը ներկայացրել է ՌԴ առերեւույթ կեղծ վարորդական իրավունքի վկայական: Մեքենան տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՏՎՅԱԼՆԵՐ

Հոկտեմբերի 6-ից 13-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5310 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 159 ավտոմեքենա: Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ 198 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 214 անձ: Հայտնաբերվել է հաշվառման համարանիշի հետ կապված՝ 23, կեղծ հաշվառման համարանիշով երթեւեկող՝ 1, չամրակապված վարելու՝ 1139, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 11, վարելու ընթացքում ծխելու՝ 579, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 367, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 265 եւ 1779 այլ իրավախախտում: 127 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 212-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 99-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 78-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 70 անձ:

Նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 15517 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 265 տրանսպորտային միջոց: Հայտնաբերվել է ոչ սթափ 217 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 498, կեղծ վարորդական վկայականով երթեւեկող՝ 5 անձ: Հայտնաբերվել է նաեւ հաշվառման համարանիշի հետ կապված՝ 53, չամրակապված վարելու՝ 4057, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 187, վարելու ընթացքում ծխելու՝ 508, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 685, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 119, արագության գերազանցման՝ 2738 եւ 3872 այլ իրավախախտում: 449 ավտոմեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 1053-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 864-ը՝ լուսարձակների անսարքությամբ, այդ թվում՝ 40 բեռնատար, 142-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի դրանից, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 37 անձ:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Անձի հետախուզման բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 10-ին Քրիստափորի փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ վարչություն է ներկայացվել 49-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկները կամ դրանց համարժեք նյութերը (անալոգի) ապօրինի իրացնելու եւ մաքսանենգության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Մերձավանում սպանության նախապատրաստության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված անձը ազատ է արձակվել: Այդ մասին հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նրա ձերբակալման առավելագույն ժամը լրացել է եւ նրան ազատ են արձակել:

Հիշեցնենք, որ սպանության նախապատրաստության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում մի շարք տներում կատարվել են քննչական գործողություններ, մեկ անձ ձերբակալվել է: Ձերբակալված անձն ունեցել էր զենք, որը հայտնաբերվել էր:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 23-ին Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանը սպանվեց եւ սպանության գործով կա 2 կալանավորված անձ: Դեպքից հետո Մերձավանում իրավիճակը շարունակում է լարված մնալ, եւ իրավապահները տեղեկություններ ունեին, որ նոր սպանություն է նախապատրաստվում, ինչից հետո մի շարք բնակարաններում խուզարկություն սկսվեց եւ մեկ անձ ձերբակալվեց: Վերջինիս ազատ են արձակել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՈՂՈՔ

Իջեւանի բնակիչ Դավիթ Ճուղուրյանը հոկտեմբերի 12-ին ֆեյսբուքյան իր էջում տեղադրել է տեսանյութ եւ լուսանկար՝ Տավուշի մարզպետարանի շենքին ծածանվող դրոշի վերաբերյալ, եւ գրառել է. «Հարգելի՛ Վարչապետ ջան, Տավուշի Գլխավոր Դրածոյին բացատրեք, որ Տավուշի մարզպետարանի շենքը իր առանձնատունը չի, եւ մարզպետարանի շենքի գլխի՝ Հայաստանի Հանրապետության խորհրդանիշ հանդիսացող «Դրոշը» իր ներքնաշորը չի, որ պատռված լինի եւ չերեւա այսպիսի բան: Հանրապետականների օրոք նույնիսկ ես տեսած չեմ, արդեն այս տարվա ընթացքում երկրորդ դեպքն է, հասկանում եմ, էժան գնումներ են կատարում, որ խնայեն բյուջեն կամ գրպանեն ավելացված գումարները, բայց ամեն ինչի վրա չի, որ պիտի խնայեն:

Հարգանքներս ձեզ, Հարգելի Վարչապետ ջան»: (Դ. Ճուղուրյանի գրառումը տեղադրել ենք միայն ուղղագրական կոպիտ սխալները եւ վրիպակները ուղղած - խմբ.):

Նա այդ գրառմանը հեշթեգով ավելացրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, Աննա Հակոբյանին, Արսեն Թորոսյանին, Ալխաս Ղազարյանին, Արթուր Հովհաննիսյանին, Վահագն Ալեքսանյանին:

Հավելենք, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2021թ. ապրիլի 8-ին իր դասընկեր, իր ամուսնության քավոր Հայկ Ղալումյանին նշանակել է Տավուշի մարզպետ. վերջինս մինչ օրս պաշտոնավարում է: Իջեւանցի երիտասարդը մարզպետարանի շենքի դրոշի վատ վիճակի համար Նիկոլ Փաշինյանին բողոքել է Փաշինյանի քավոր, դասընկեր մարզպետից:

ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄԸ՝ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղը, Կիրանցին հարակից Աճարկուտ բնակավայրը 2024 թվականից գազիֆիկացված են, սակայն այդ գյուղերի առանձնատները գազատարին միացված չեն: Այդ գյուղերի բնակիչները գազատարին միանալու, իրենց տներ գազի ճյուղավորումներ անցկացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցները չունեն: Նոյեմբերյան համայնքի հեռավոր, սահմանամերձ Բարեկամավան գյուղը մի քանի տարի գազիֆիկացված էր, սակայն բարեկամավանցիները նույն պատճառով իրենց տներում բնական գազ չունեին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել այդ 3 գյուղերի առանձնատների գազիֆիկացման վերաբերյալ: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան բնակավայրի՝ դեպի անհատական բնակելի տների, գազիֆիկացումն իրականացված է, իսկ Բերքաբեր, Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրերի գազիֆիկացման հարցով կարող եք դիմել Իջեւանի համայնքապետարանին»:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2024 թվականին սահմանազատման գործընթացի շրջանակներում բանակցում էր իրենց հողերը կորցրած, Ադրբեջանին հանձնված տարածքների սեփականատերերի հետ, նրանց հետ թաքուն սակարկում պետական բյուջեից հողերի սեփականատերերին տրվող դրամական փոխհատուցումների չափերը, սակայն հիմա մեր թղթակցին խորհուրդ է տալիս Կիրանցի առանձնատների գազիֆիկացման հիմնախնդրով դիմել Իջեւանի համայնքապետարան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ՆԿԱՏԵԼ

ՀՀ-Ի ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՆՔԻ ԷՄԲԱՐԳՈՆ ԿՎԵՐԱՑՎԻ

Մեծ Բրիտանիան որոշում է կայացրել լիարժեքորեն վերացնել զենքի վաճառքի էմբարգոն Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ՝ ի նշան խաղաղության գործընթացում արձանագրված առաջընթացի: Այս մասին հայտարարել է Միացյալ Թագավորության Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի եւ Անդրծովյան տարածքների հարցերով պետական նախարար Սթիվեն Դաութին՝ ներկայացնելով համապատասխան հայտարարություն Մեծ Բրիտանիայի խորհրդարանում:

Դաութինը նշել է, որ հաշվի առնելով Վաշինգտոնում կայացած գագաթնաժողովի պատմական արդյունքները եւ տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղությամբ գրանցված էական ձեռքբերումները՝ լուրջ վերանայում է կատարվել նախկին սահմանափակումների հիմքում ընկած պատճառների վերաբերյալ:

«Մեծ Բրիտանիան կարծում է, որ ԵԱՀԿ կողմից 1992 թվականին սահմանված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը զենքի մատակարարումների վերաբերյալ կոչի հիմքում ընկած տրամաբանությունն այլեւս արդիական չէ: Ուստի մենք որոշել ենք լիովին վերացնել զենքի էմբարգոն Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ», - նշել է Դաութինը:

Պետնախարարի խոսքով՝ այս որոշումը նպատակ ունի խորացնել Մեծ Բրիտանիայի անվտանգության եւ պաշտպանության ոլորտում համագործակցությունը երկու երկրների հետ՝ արագ փոփոխվող գլոբալ եւ տարածաշրջանային իրադրության պայմաններում: Նրա խոսքով, այս քայլը նաեւ կնպաստի Հայաստանին եւ Ադրբեջանին՝ իրենց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու գործում, այդ թվում՝ արտաքին ուժերից եւ ոչ պետական տարրերից բխող ավանդական ու հիբրիդային սպառնալիքներին դիմակայելիս:

Միեւնույն ժամանակ, Դաութինը ընդգծել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հետ կապված ռազմավարական արտահանման եւ առեւտրի լիցենզիաների տրամադրումը կշարունակի իրականացվել անհատական գնահատման հիման վրա՝ համաձայն Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ սահմանված չափանիշների: Ըստ նրա՝ կառավարությունը չի տրամադրի որեւէ արտահանման լիցենզիա, եթե այն չհամապատասխանի սահմանված պահանջներին:

«Մեծ Բրիտանիան ուշադիր հետեւելու է Հայաստանի եւ Ադրբեջանի՝ ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության իրավիճակին: Մենք անկեղծորեն հավատում ենք, որ սա իրական հնարավորություն է՝ խաղաղություն, անվտանգություն եւ բարգավաճում ապահովելու Հարավային Կովկասում: Մեծ Բրիտանիան պատրաստ է համագործակցել ինչպես երկու երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ մյուս գործընկերների հետ՝ խաղալով կառուցողական եւ նախաձեռնողական դեր տարածաշրջանի կայունության ապահովման գործում», - նշել է բրիտանացի պաշտոնյան:

Սթիվեն Դաութինը նաեւ նշել է, որ հաշվի առնելով վերջին զարգացումները՝ Միացյալ Թագավորության կառավարությունը որոշել է երկկողմ հարաբերությունները Հայաստանի եւ Ադրբեջանի հետ բարձրացնել ռազմավարական գործընկերության մակարդակի:

Նա անդրադարձել է նաեւ օգոստոսին Հայաստան եւ Ադրբեջան կատարած իր այցին՝ ընդգծելով, որ այդ այցը նպատակ ուներ վերահաստատել Մեծ Բրիտանիայի պատրաստակամությունը՝ աջակցելու տարածաշրջանում երկարատեւ խաղաղության հաստատման գործընթացին:

«Մենք ձեռնարկել ենք անհրաժեշտ քայլերը՝ սատարելու խաղաղության գործընթացին եւ աջակցելու երկու երկրների ցանկությանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը պաշտոնապես դադարեցնելու վերաբերյալ: Մենք ողջունում ենք սեպտեմբերի 1-ին ԵԱՀԿ շրջանակներում կայացված կոնսենսուսը, որը հիմք դրեց Մինսկի խմբի կառույցների պաշտոնական լուծարմանը», - եզրափակել է Դաութինը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ

Կարեն Սարգսյանը արդեն 4 տարի զբաղեցնում է Գեղարքունիքի մարզպետի պաշտոնը: Նա մարզպետ նշանակվել է 2021 թվականի սեպտեմբերի 8-ից:

Համաձայն Կարեն Սարգսյանի 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ նա ունի 2 անշարժ գույք:

2023 թվականին միանձնյա սեփականությամբ նոր հողամաս է ձեռք բերել Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում, որի արժեքը կազմել է 12 մլն 500 հազար դրամ՝ գրեթե 32 հազար ԱՄՆ դոլար:

Կարեն Սարգսյանը, որպես անշարժ գույք, հայտարարագրել է նաեւ դեռ վաղեմի՝ 2013 թվականին Ռուսաստանի Դաշնությունում գնած բազմաբնակարան շենքում գտնվող 1 բնակարան: Այս բնակարանի ձեռքբերումը համընկել է Սարգսյանի արտագնա աշխատանքի տարիներին՝ 2009-ից 2015 թվականներին, երբ նա ՌԴ-ում էր աշխատում:

Նկատենք, որ ՀՀ-ում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող Կարեն Սարգսյանը 2016 թվականից մինչ օրս՝ գրեթե 8 տարի, այդպես էլ չի կարողանում ավարտել Մոսկվայի մարզային իրավունքի եւ կառավարման ինստիտուտի մենեջմենթի բաժինը, քանի որ, ըստ կենսագրության, մինչ օրս սովորում է այնտեղ:

Մարզպետ Կարեն Սարգսյանի բանկային հաշիվների մնացորդը կազմում է 3 մլն 540 հազար դրամ:

Կանխիկ դրամական միջոցները կազմել են 720 հազար ռուբլի եւ 1,2 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 17 մլն 176 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից: Սարգսյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8 մլն դրամ, որը բնակելի տան հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՌԵԼԻՔԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է

Վերջին շրջանում վարորդները բողոքում են, որ ավտոմեքենայի վառելիքը թանկացել է՝ օրինակ բերելով հեղուկ գազը:

Բանն այն է, որ գրեթե մեկ-երկու շաբաթում հեղուկ գազի արժեքը կրկնակի թանկացել է՝ դառնալով 200-220 դրամ: Այժմ պնդում են, որ այն աստիճանաբար իջնում է, 160-170 դրամ է դարձել, սակայն համեմատելով նախորդ տարվա գնի հետ՝ նշում են, որ, միեւնույնն է, թանկ է:

«Ժողովուրդ» օրաթերթը, ուումնասիրելով վիճակագրական կոմիտեում առկա տվյալները, համոզվեց, որ գնաճն ավելի բարձր է եղել քան ակնկալվում էր:

Հանրապետության դիտարկվող բնակավայրերում 2025թ. սեպտեմբերին, օգոստոսի համեմատ, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1-0.7%-ով, այդ թվում համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Հրազդանում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.3%-ով:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար, 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՃԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում 2025 թվականի սեպտեմբերին գների աճը կազմել է 0.34%, մինչդեռ օգոստոսին արձանագրվել էր 0.40% անկում, հուլիսին՝ 0.57% աճ (Կոմունալ ծառայությունների սակագների ինդեքսացիայի ֆոնին), հունիսին՝ 0.20%, մայիսին՝ 0.43%, ապրիլին՝ 0.40%, մարտին՝ 0.65%, փետրվարին՝ 0.81%, եւ հունվարին՝ 1.23%:

2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին սպառողական գները Ռուսաստանում աճել են 4.29%-ով:

Սեպտեմբերյան գնաճը փոքր-ինչ ցածր է եղել շուկայի սպասումներից. «Ինտերֆաքս»-ի կողմից հարցված տնտեսագետների կոնսենսուս-կանխատեսումը ենթադրում էր 0.39% գնաճ, մինչդեռ շաբաթական տվյալները ցույց էին տալիս 0.35% աճ:

Տարեկան գնաճը սեպտեմբերին դանդաղել է մինչեւ 7.98%, մինչդեռ սպասվում էր 8.04%:

Հիմնական սպառողական գների ինդեքսը 2025 թվականի սեպտեմբերին կազմել է 100.39% (օգոստոսին՝ 100.14%), իսկ տարեկան կտրվածքով՝ 107.65% (օգոստոսի՝ 108.04%-ի դիմաց):

Սննդամթերքը սեպտեմբերին թանկացել է ընդամենը 0.03%-ով (տարեկան համեմատությամբ՝ +9.46%):

Միեւնույն ժամանակ, բանջարաբոստանային արտադրանքը սեպտեմբերին էժանացել է 3.49%-ով (տարեկան կտրվածքով թանկացել է 1.22%-ով):

Ոչ սննդամթերքային ապրանքները սեպտեմբերին թանկացել են 0.59%-ով (տարեկան՝ +3.85%):

Ծառայությունների գներն աճել են միջինը 0.47%-ով (տարեկան՝ +11.09%):

Ինչպես հաղորդվում է, հոկտեմբերի սկզբին շաբաթական գնաճը Ռուսաստանում զգալիորեն արագացել է. հոկտեմբերի առաջին շաբաթում գների աճը կազմել է 0.20%, ինչը պայմանավորված է բենզինի գների բարձրացմամբ եւ միրգ-բանջարեղենի սեզոնային թանկացմամբ:

Տվյալների համաձայն՝ հոկտեմբերի 6-ի դրությամբ, տարեկան գնաճը Ռուսաստանում արագացել է մինչեւ 8.07%՝ սեպտեմբերի վերջի 7.98%-ի դիմաց, եթե հաշվարկվում է շաբաթական դինամիկայով (այս մեթոդն օգտագործում է Կենտրոնական բանկը), եւ մինչեւ 8,04%, եթե հաշվարկվում է 2024 թվականի հոկտեմբերի միջին օրական տվյալների հիման վրա (այս մեթոդն օգտագործում է Տնտեսական զարգացման նախարարությունը):

ՆԱՎԹԻ ԳՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Աշխարհի խոշորագույն հումքային բորսաների հոկտեմբերի 13-ի առեւտրային նստաշրջանների արդյունքում սահմանվել են նավթի հետեւյալ գները.

Նյու-Յորքի NYMEX (New York Merchantile Exchange) բորսա՝ WTI (Light Sweet) տեսակի նավթի գինը նվազել է 0.20%-ով եւ կազմել 59.72 դոլար: Լոնդոնի ICE (InterContinental Exchange Futures) բորսա՝ Brent տեսակի նավթի գինը նվազել է 0.22%-ով եւ կազմել 63.55 դոլար:

Նավթի չափման միավորը բարելն է: Մեկ բարելը կազմում է 158.98 լիտր:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ ԵՎ «ՖԱՍԹ» ՇԻՖԹԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԿԱՅԱՑԵԼ Է «Drama Queen» ՇՈՈՒԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԱՌԱՋՆԱԽԱՂԸ

«Ֆասթ» բանկի, «Ֆասթ» Շիֆթի եւ «Ֆասթ» Թիքեթի աջակցությամբ օրերս կայացել է «Drama Queen» կաբարե-շոուի երեւանյան առաջնախաղը:

Դրամա, հումոր, շքեղ կանայք ու անզուգական պարեր: Երկար ու ձիգ ամիսներ տեւած փորձեր, քրտնաջան աշխատանք, ձեռքով պատրաստված 150 բեմական զգեստ, պրոֆեսիոնալ թիմ՝ աշխարհի ութ երկրից: Եկատերինա Վառնավա եւ Արսեն Գրիգորյան դուետը հիացրել է ներկաներին հմայքով, անզուգական պարով եւ հումորով:

Դերասան Արսեն Գրիգորյանը նշել է, որ շոուի գույները համադրվել են հովանավորների վիզուալ բրենդինգի հետ. ««Ֆասթ» Բանկը եւ «Ֆասթ» Շիֆթը մեզ հետ են, նաեւ մեր տոմսերը «Ֆասթ» Թիքեթով են վաճառվել: Եվ շատ ուրախ եմ այս Ֆասթ համագործակցության համար: Մասնավոր ընկերությունների ներդրումը ներկայացումների մեջ անչափ կարեւոր է ու անհրաժեշտ», - ասել է նա:

Դերասանուհի Եկատերինա Վարնավան, խոսելով շոուի եւ Արսեն Գրիգորյանի հետ համագործակցության մասին, ասել է. «Կարծում եմ՝ չկա մարդ, որ կարող է անտարբեր անցնել նրա կողքով: Նրա բացառիկ հմայքը, տաղանդը, հումորի զգացումը, արտիստիզմը: Նա հրաշալի եւ շոուման է, եւ դերասան, եւ երգիչ, մարդ, նվագախումբ, ուզում ես միշտ մոտ լինել նման արտիստին, մոտենալ, դիպչել եւ երազանք պահել: Մենք բոլորս էլ մի քիչ դրամատիկ թագուհիներ ենք: Շոուն բոլորի մասին է: Բոլորս բեմում ցույց ենք տալիս դրամա՝ միաժամանակ մնալով թագուհիներ»:

«Drama Queen»-ը Երեւանում նոր նշաձող է սահմանել ժամանակակից թատերական շոուների համար՝ միավորելով միջազգային չափանիշներ, տեղական արտիստիկ վարպետություն եւ մշակութային համարձակություն:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Evoca is 35 Gala Event՝ VIP ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բանկը նշեց իր հիմնադրման 35 ամյակն իր հաճախորդների եւ գործընկերների հետ:

Հոկտեմբերի 8-ին Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ Evocabank-ի 35 ամյակին նվիրված միջոցառումների շարքի եզրափակիչ երեկոն: Միջոցառմանը ներկա էին բանկի VIP հաճախորդները, խոշոր գործընկերները եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Միջոցառման կոնցեպտը մշակված էր բանկի պատմության, ձեռքբերումների եւ նորարար մոտեցումների շուրջ: Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը խորհրդանշում էր բանկի կայունությունն ու հզորությունը, իսկ շենքի ֆուտուրիստիկ ձեւավորումը՝ բանկի ստեղծած նոր իրականությունը: Վիզուալ-զգայական էֆեկտներով վերափոխված սրահներն արտահայտում էին բանկի հաճախորդակենտրոն մոտեցումները, թափանցիկությունն ու թվային, առաջադեմ մտածելակերպը:

Երեկոյի յուրահատուկ տրամադրությունն ապահովեց լեգենդար Մալխաս ջազ բենդը, այնուհետեւ՝ հանրահայտ իտալուհի Ինգրիդը՝ դարձնելով երեկոն անմոռաց:

Evocabank-ի 35 տարիները միայն թվեր չեն. դրանք նորարարության, վառ գաղափարների եւ մարդկանց պատմությունն են:

Հիշեցնենք, որ նույն օրը տեղի էր ունեցել նաեւ բանկի գործընկերների համար կազմակերպված կոնֆերանս եւ գրքի շնորհանդես, որի մանրամասները կարող եք տեսնել բանկի կայքէջում:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃՆ ԱՋԱՏՎՈՒՄ Է ՊԼԱՍՏԻԿԻՑ. ՀԱՎԱՔՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԸ ԿՎԵՐԱՄՇԱԿՎԵՆ

«Ակբա» բանկն ու Գերմանիայի բնության պահպանության միությունը (NABU) Մաքուր ապագա Սեւանա լճի համարե ծրագրի շրջանակում համատեղ իրականացրել են լճի ափերից մեկը պլաստիկից ու թափոններից մաքրելու աշխատանքներ: Այս անգամ «Ակբա» բանկի աշխատակիցներին էին միացել նաեւ իրենց ընտանիքի անդամները:

Աշխատանքների արդյունքում Սեւանա լճի ափերից մեկը մաքրվել է թափոններից եւ կենցաղային աղբից, որից հետո այն ուղարկվել է վերամշակման:

«Ծրագրի նպատակը ոչ միայն տարածքը պլաստիկից եւ այլ թափոններից մաքրելն ու մարդկանց իրազեկելն է, այլեւ այդ թափոնները հետազոտելն է: Մեր նպատակն է հասկանալ, թե ինչ տեսակի աղբ կա այստեղ, որպեսզի ապագայում փորձենք կանխել Սեւանա լճի աղտոտումը: Այն աղբը, որը հնարավոր է վերամշակել, մենք այսօր տարանջատում ենք եւ ուղարկում վերամշակման»,- նշել է NABU-ի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Նարեկ Գրիգորյանը:

«Ակբա» բանկի եւ Գերմանիայի բնության պահպանության միության գործընկերությունն ավելի քան տասը տարվա պատմություն ունի, որի ընթացքում համատեղ բազում նախագծեր են իրականացվել՝ Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրերից մինչեւ գյուղական տուրիզմի զարգացում ու շրջակա միջավայրի բարելավում:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԻՋԵԼ Է

Սեւանա լճի մակարդակը 2025 թվականի հոկտեմբերի 6-12-ն ընկած ժամանակահատվածում իջել է 3 սմ-ով եւ կազմել՝ 1900.37 մ (12.10.25 թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 12 սմ-ով, իսկ 2025 թվականի հունվարի 1-ի մակարդակից՝ 2 սմ-ով: Այս մասին տեղեկացնում են Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնից:

Արփա-Սեւան ջրատարով 2025 թվականի հոկտեմբերի 6-12-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 1.277 մլն խմ, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից հոկտեմբերի 12-ը ներառյալ՝ 106.427 մլն խմ:

Սեւանա լճից բաց թողնված ջրի ծավալը, ըստ Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքի Գեղամավան դիտակետի, հոկտեմբերի 6-12-ն ընկած ժամանակահատվածում կազմել է 0.000 մլն խմ, իսկ ընդհանուր գումարային բացթողումը՝ հունիսի 6-ից հոկտեմբերի 12-ը ներառյալ՝ 180.965 մլն խմ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ

ԿԱՅԱՑԱՎ «Mallորվածը» ՏՈՆԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

Հոկտեմբերի 9-ին, «Կինոմոսկվայում» կայացավ ռեժիսոր Գոռ Կիրակոսյանի նոր ֆիլմի՝ «Mallորվածը»-ի պրեմիերան: Հայ հանդիսատեսին արդեն հայտնի կինոնախագծերի՝ «Մեծ պատմություն փոքր քաղաքում», «Քայլ ձիով», «Ազնիվ գողերը» եւ «Սեւազգեստ կանայք» ֆիլմերի հեղինակ Կիրակոսյանը այս անգամ հանդիսատեսին ներկայացնում է տոնական ընտանեկան կինո, որը կարող է լրացնել հայկական ամանորյա կինոյի բացը:

Հայկական կինեմատոգրաֆիայում ամանորյա ժանրի ֆիլմեր գրեթե չեն ստեղծվում: Դերասան եւ պրոդյուսեր Գրիգոր Դանիելյանը դեռ 2018-ին նկատել էր այդ բացը: Նրա եւ Գարիկ Սեփխանյանի համատեղ գաղափարով էլ ծնվեց «Mallորվածը», որն իրականություն դարձավ Գոռ Կիրակոսյանի եւ «ArmComedy»-ի հեղինակ Նարեկ Մարգարյանի սցենարով:

«Միշտ մտածում էի, որ մեզ պետք են ամանորյա ֆիլմեր, որոնք ամեն տարի կդառնան ավանդույթ: Պատերազմի օրերին շատ էի շփվում Գոռի հետ, եւ հենց այնտեղ էլ կիսվեցի գաղափարով: Երբ ամեն ինչ ավարտվեց, որոշեցինք՝ ժամանակն է ֆիլմը նկարահանելու: Ես ու Գարիկը վստահ էինք, որ Գոռն այն լավագույն ձեւով կկատարի», - պատմեց Գրիգոր Դանիելյանը՝ հավելելով, որ սցենարական զարգացումները նախ ինքն ու Գարիկն են գրել, սակայն պատմությունը ավարտին են հասցրել Նարեկն ու Գոռը:

Ֆիլմի համապրոդյուսերներն են Գրիգոր Դանիելյանը, Գարիկ Սեփխանյանը եւ Գոռ Կիրակոսյանը: Թիմը առանձնահատուկ է հիշատակել փոքրիկ Լեո Մկրտչյանին, որի համար սա առաջին կինոդերն է: Չնայած այն հանգամանքին, որ նրա ծնողները՝ երգիչ Մարտին Մկրտչյանը եւ երգչուհի Հռիփսիմե Հակոբյանը, նկարահանումների ընթացքում ԱՄՆ-ում էին, Լեոն պատմել է, որ թիմը իր համար դարձել է ընտանիք: Գոռ Կիրակոսյանը կատակով ավելացրել է, որ Լեոն այնքան նվիրված էր, որ երբեմն հատուկ երկարացնում էր նկարահանումները՝ հաջորդ օրը դասի չգնալու համար:

Ասուլիսում Ռաֆայել Երանոսյանն էլ շնորհակալություն հայտնեց ռեժիսորին՝ նշելով, որ «Գոռի ֆիլմերում նկարահանվելու համար անգամ ինքն է պատրաստ վճարել»: Նա նշեց, որ մեծապես գնահատում է Կիրակոսյանի այն փաստը, որ վերջինս, մեծանալով ԱՄՆ-ում, նախընտրում է ֆիլմեր ստեղծել հենց Հայաստանում:

Գրիգոր Դանիելյանն ընդգծեց, որ Կիրակոսյանի նախորդ ֆիլմերը նույնպես հաճախ են ցուցադրվում Ամանորին, ու «Mallորվածը» եւս կարող է դառնալ տոնական եթերի նոր ավանդույթ:

Ֆիլմում Ռաֆայել Երանոսյանը ներկայացել է գողի կերպարով: Նրա խաղընկերներն են Արման Նավասարդյանը եւ Դիանա Մալենկոն, որի համար սա առաջին բացասական դերն է: Մալենկոն պատմեց, որ ռեժիսորի հետ մանրակրկիտ աշխատել են կերպարի շարժման, ձայնի եւ արտաքին հատկանիշների վրա՝ ստանալով հետաքրքիր հակադրություն՝ «քյարթու» արտաքինով, բայց ներքին դրամատիզմով հերոսուհու:

Դերասանուհի Ռոզի Ավետիսովան նշեց, որ Գոռ Կիրակոսյանի հետ համագործակցությունն իր համար միշտ նոր փորձ է. «Գոռը նախ ինձ հարցրեց՝ դեմ չեմ արդյոք շիկահեր դառնալուն, հետո միայն ուղարկեց սցենարը: Նրան անվերապահորեն վստահում եմ, որովհետեւ յուրաքանչյուր դեր տարբեր ձեւով է բացում ինձ»:

Դերասանները նաեւ ընդգծեցին, որ ֆիլմում բոլորն անցել են խիստ քաթինգ, եւ նույնիսկ գաղափարի հեղինակները կարող էին դուրս մնալ նախագծից, եթե դերին չհամապատասխանեին:

Չնայած որոշ համեմատություններին՝ «Mallորվածը» չի կրկնում «Տանը մենակ»-ի պատմությունը. այն միայն պահպանում է տոնական միջավայրն ու երեխա հերոսի առկայությունը: «Այո, ոգեշնչում ենք ստացել, բայց սցենարը լրիվ նոր պատմություն է: Նկարահանումները դժվար էին՝ ձյուն, ցուրտ, գիշերային ժամեր, բայց արդյունքը արժեր: Ֆիլմի աշխարհագրությունը մեծ է՝ Թբիլիսի, Ստեփանավան, Կապան, Երեւան: Կլինեն նաեւ սիրելի դերասաններ էպիզոդիկ դերերով, որոնց անունները հիմա չեմ բացահայտի, թող անակնկալ լինի»,- ասաց Գոռ Կիրակոսյանը:

Ֆիլմի կոմպոզիտորն է Արմեն Մարտիրոսյանը, իսկ Գարիկ եւ Սոնա Ռուբենյանի «Էն ում Ամանորն է» երգը հնչում է ֆիլմում:

«Mallորվածը» միավորում է հումորը, արկածը եւ տոնական տրամադրությունը՝ հիշեցնելով, որ ամանորի հրաշքը սկսվում է ընտանիքից:

Ֆիլմում նկարահանվել են Գրիգոր Դանիելյանը, Ռոզի Ավետիսովան, Դիանա Մալենկոն, Արման Նավասարդյանը, Ռաֆայել Երանոսյանը, Ներսես Ավետիսյանը, Անի Խաչիկյանը, Գարիկ Սեփխանյանը, Իննա Խոջամիրյանը, Լեո Մկրտչյանը եւ այլք:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ

Ճապոնական ֆիլմերի փառատոնն այս տարի կհյուրընկալվի ոչ միայն Երեւանում, այլեւ Կապանում եւ Դիլիջանում: 19-րդ փառատոնը, որի ընթացքում կցուցադրվի երեք ժամանակակից կինոնկար, մեկնարկն ազդարարեց հոկտեմբերի 13-ին «Մոսկվա» կինոթատրոնում: Փառատոնը բացվեց ռեժիսոր Նաոկի Օգիգամիի «Վարձով կատու» ֆիլմով:

Երեկոյին Հայաստանում Ճապոնիայի դեսպան Աոկի Յուտական շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ում աջակցությամբ հնարավոր է դարձել 19-րդ փառատոնի անցկացումը:

Անդրադառնալով «Վարձով կատու» կինոնկարին՝ նա ասաց, որ այն պատմում է մի կնոջ մասին, որը բնակվում է ավանդական ճապոնական տանը՝ շրջապատված բազմաթիվ կատուներով: Նա սկսում է «Կատուների վարձակալ» ծառայություն՝ իր սայլակով այցելելով մենակ զգացող մարդկանց՝ տարեց կնոջ, որը կորցրել է ամուսնուն ու սիրելի կատվին, միջին տարիքի տղամարդու, որը հեռու է ընտանիքից, մեքենաների վարձույթի ընդունարանի աշխատակցի, որի կյանքում չկա որեւէ մեկը, որի հետ կարող է խոսել:

Ըստ Աոկի Յուտակայի՝ այդ հանդիպումների միջոցով ֆիլմը յուրովի է բացահայտում մարդկային կապն ու բուժման ուժը:

«Կինոյի համընդհանուր լեզվով ցանկանում ենք ավելի խորացնել փոխըմբռնումն ու բարեկամությունը Ճապոնիայի եւ Հայաստանի ժողովուրդների միջեւ: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ այս փառատոնը հիշարժան եւ հաճելի կլինի բոլորի համար»,-եզրափակեց դեսպանը:

ԽԱՂԻ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Ամերիկացի երգչուհի Բիլլի Այլիշը թողարկել է «Սոս» թղթախաղի իր յուրահատուկ տարբերակը, այն 20 դոլարով վաճառվում է արտիստի կայքում: Այս մասին փոխանցում է rbc.ru-ն:

Խաղաքարտերի տուփը բաղկացած է 112 քարտից, որոնք տպագրված են 300 գրամանոց բարձրորակ շինարարական թղթի վրա եւ ներառում է գույներ, խորհրդանիշներ եւ թվեր, որոնք արտացոլում են երգչուհու գեղարվեստական գեղագիտությունը:

Խաղաքարտերի տուփը բացառիկ է դարձնում ոչ միայն դրա ստեղծողը, այլեւ ստանդարտ կանոններում չգտնվող հատուկ քարտերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼՈՂԻ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

ՀՀ մարզերում դպրոցահասակ երեխաների առողջ ապրելակերպի խրախուսման եւ լողի անվճար ուսուցման փորձնական ծրագրի շրջանակում մեկնարկել է Արագածոտնի, Կոտայքի եւ Տավուշի մարզերի երեխաների գրանցման գործընթացը:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից հայտնում են, որ ծրագիրը նախատեսված է երկու տարիքային խմբերի համար.

8-12 տարեկաններ

13-17 տարեկաններ

Լողավազաններում դպրոցահասակ երեխաների համար լողի ուսուցումը նախատեսվում է իրականացնել 2 տարիքային խմբերի համար՝ 3-ական խմբով. 1-ին խմբում ընդգրկվում են 8-12 տարեկան երեխաներ, 2-րդ խմբում՝ 13-17 տարեկաններ: Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր մարզում լողի պարապմունքների ծրագրում կընդգրկվի 66 երեխա՝ տարիքային 2 խմբում: Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել emis.am կայքի «Սովորողի օրագիր» էջում բացված համապատասխան բաժնում:

Գրանցումն իրականացվում է երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից:

Գրանցման վերջնաժամկետը 2025 թվականի հոկտեմբերի 15-ն է:

Լողի պարապմունքներին երեխաների մասնակցությունն անվճար է: Ուսուցումը կիրականացվի Ապարան, Իջեւան եւ Հրազդան համայնքներում գործող լողավազաններում՝ փորձառու մասնագետների ուսուցմամբ եւ անվտանգային համապատասխան պայմանների ապահովմամբ:

ԱԱ–2026–Ի ՈՒՂԵԳԻՐ ՆՎԱՃԱԾ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Կաբո-Վերդեի ֆուտբոլի հավաքականը հաղթել է Էսվատինիի ընտրանուն եւ դուրս եկել 2026 թվականի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլ:

Պրայում կայացած հանդիպումն ավարտվել է 3:0 հաշվով, գոլերը խփել են Դայլոն Լիվրամենտոն (48-րդ րոպե), Վիլի Սեմեդուն (54) եւ Ստոպիրան (90+1):

Ջուգահեռ խաղում Կամերունի հավաքականն իր դաշտում 0:0 է խաղացել Անգոլայի հետ:

Կաբո-Վերդեի թիմը վաստակել է 23 միավոր, զբաղեցրել առաջին տեղը D խմբում եւ ստացել ուղեգիր, իսկ Կամերունը (19 միավոր) դարձել է երկրորդը: «Կապույտ շնաձկները» աշխարհի առաջնությանը կմասնակցեն առաջին անգամ: Կաբո-Վերդեի հավաքականը դարձավ մրցաշարի 22-րդ մասնակիցը, որը կանցկացվի 2026 թվականի հունիսի 11-ից հուլիսի 19-ը ԱՄՆ-ում, Մեքսիկայում եւ Կանադայում:

2026 թվականի աշխարհի առաջնությանը առաջին անգամ կմասնակցի 48 հավաքական:

● *Հոկտեմբերի 17-ին՝ 12:00-ին, Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Դետեկտիվ Ալենը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1 500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, եւ որքան է կազմում պետական տուրքի դրույքաչափը: Խնդրում եմ նաեւ տեղեկացնել, թե ինչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը:

Մարինե Եգանյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ որդեգրման գրանցման համար պահանջվում է ներկայացնել՝

1) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերը (պատճենները),

2) դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը,

3) երեխայի ծննդյան ակտային գրանցման տեղեկանքը կամ ծննդի պետական վկայականը,

4) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ որդեգրման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը: Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրման պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ որդեգրման պետական գրանցման համար հիմք է դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել որդեգրողի (որդեգրողների) կամ նրա լիազորած անձի միջոցով: Որդեգրման պետական գրանցումը կատարում է ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Ժենյա Անդրեասյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հասարակությունը վերջին շրջանում այնքան է վնասում շրջակա միջավայրը, որը այս ծառի վրա որոշել են հատուկ գրություն փակցնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 + 2 +13 + 17
Կոտայքի լեռներ	- 2 + 3 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 7 +15 + 19
Գեղարքունիք	- 2 + 3 +13 + 16
Լոռի	0 + 4 +14 + 18
Տավուշ	+ 4 + 8 +16 + 20
Արագածոտնի լեռներ	- 3 + 2 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +14 + 19

Արարատ	+ 3 + 7 +17 + 20
Արմավիր	+ 5 + 9 +20 + 23
Վայոց ձորի լեռներ	- 2 + 3 +13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 9 +19 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 4 +13 + 17
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +18 + 21
ԼՂՀ	+ 5 + 10 +17 + 21
Երեւան	+11 + 13 +14 + 16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*